Եղիշե Չարենց

Քո՛ւյր, երազներն այրվեցին ու անցան

Քո՛ւյր, երազներն այրվեցին ու անցան,
Եվ ջի՛նջ մնաց քո աչքերում, իմ հոգում
Մի սրբացած, անրջացած ծիածան՝
Վերջի՛ն սիրո մի լուսավոր ամոքում:

Ու հիշում եմ առավոտը գունաթափ,
Ու կապույտը այն սփրթնած ու անհուն.
Ու հիշում եմ, որ քեզ կանչեց մի կարապ,
Երբ արթնացար արևծագի դղյակում...

Ու հիշում եմ ես երկինքը վարդագույն,
Ոսկի վարդեր, որ բացվեցին ու չկան...
Ու հիշում եմ իրիկնային երկնքում
Հրաժեշտը ոսկեժպիտ կարմրության...

Ու հիշում եմ հուր արևը մի թիթեռ,
Ճախրեց, անցավ, աննյութացավ ու չկա.
Իսկ իմ հոգին այնքան հստակ, ջինջ է դեռ
Մի լո՛ւյս ժպիտ լուսաժպիտ աղջկա...

Իսկ երազներն այրվեցին ու անցան:
Բայց ջինջ մնաց քո աչքերում, իմ հոգում
Մի սրբացած, անրջացած ծիածան՝

Վերջին սիրո մի լուսավոր ամոքում...